

cut

ILINDSAY@UMAIL.UCSB.EDU
MAIN LIBRARY

ATTN:	SUBMITTED: 1999-12-30
PHONE	PRINTED: 2006-04-12 10:44:05
:	
FAX:	REQUEST NO REG-10020292
E-MAI	SENT VIA: Manual
	955919

REG	Regular	Copy	Journal
-----	---------	------	---------

TITLE:	ill 918385 5 pages
DELIVERY:	E-mail Post to Web: ilindsay@umail.ucsb.edu
REPLY:	Mail:

THIS IS NOT A BILL.

NOTICE: THIS MATERIAL MAY BE PROTECTED BY COPYRIGHT LAW

DS 161 P274

Request Date: 05-APR-2006

Expires at ONE AM on: 12-APR-2006

ILL Number: 

ILL Number: 955919

Call Number:

Material Type: Serial

Title: Patma-banasirakan handes.
Istoriko-filologicheskiy zhurnal

Article Author: Torosyan, R. M.

Article Title: Archeological findings from Echmiatsin

Vol./Issue: 55()

Part Pub. Date: 1971

Pages: 286-90

Requester: UCSB Library

RELAYS TO PATRON
APR 10 2006

TGQ or OCLC #: 

TGQ or OCLC #: 918385

ID: USB1

ISBN/ISSN: 0135-0536

UC

APR 06 2006

RECEIVED

Address: UCSB Interlibrary Loan, Davidson Library,
525 UCEN Road, Santa Barbara, CA,
93106, U.S.A. - UCSB Ariel IP
128.111.96.251 ; FAX 805-893-5290; Email
ill@library.ucsb.edu;

Patron ID: 21205453141400
Patron Barcode: 21205453141400

Patron Name: LINDSAY, IAN C (Graduate)

Patron Address: 93101,
no code

Patron e-mail: ilindsay@umail.ucsb.edu

Patron Phone: nop-hone

Service Level: Normal - Full Search

Service Type: Copy non returnable

Delivery Method: Courier

Max Cost: USD55

Request Note: YES DTD Email: ilindsay@umail.ucsb.edu

Payment Type: IFM

Need by Date:

Verification Source: MELVYL UCLinks RLG:RAI

Copyright Compliance: CCL

SCANNED


APR 12 2006

Ariel
Relais # 10070797
By: BA

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ ԷԶՄԻԱՄՆԻՑ

Վերջին տարիներս էջմիածին քաղաքի տե-
րիտորիայում ծավալված շինարարական աշխա-
տանքների և հնագիտական պատահական հայտ-
նագործությունների միջոցով էջմիածնի դավա-
ռագիտական թանգարանում հավաքվել են հնա-
գիտական արժեք ներկայացնող մի շարք նյու-

նարավոր շեղավ ստույգ պարզել, քանի որ հողի
ալժմյան մակերեսի վրա դամբարանների գոյու-
թյունը հաստատող որևէ արտաբեր նշան (հո-
ղաթումբ, քարակույտ և այլն) չի պահպանվել
և ամբողջ հողատարածությունը զրազեղված է
արտադրական շինքերով ու խաղողի այգիներով:



Նկ. 1

Դամբարանադաշտում հայտնաբերված դե-
րեզմանները ու նրանցում կատարված թաղու-
նները, ըստ իրենց կառուցվածքային ձևերի միա-
տեսակ չեն: Դրանք սայարկղային, քարարկղա-
յին, կարասային, հիմնահողային և կավի դո-
ղաղների մեջ կատարված թաղումներ են:

Դամբարանների առաջին խումբը տեղա-
վորված էր պետական տնտեսության տերիտո-
րիայի հարավային մասում դոնվող ոչ բարձր
բլրի վրա, որի տեղում ալժմ կառուցված է տն-
տեսության էլեկտրացանցի ենթակայանը: Այս-
տեղ բացվեց երեք թաղում, որոնցից երկուսը
հայտնաբերման ժամանակ դեռևս ավերված
չէին, իսկ երրորդը բլրի հարթնյման ժամանակ
լրիվ ավերվել էր: Այս գերեզմաններից առա-
ջինը կառուցված էր տարրի չափսի քառան-
կյունի քարերով (տեղական տուֆ, որի հարուստ
պաշարներ կան Նորակիրս և Բաղրամյան գյու-
ղերի մոտ):

Թեր, որոնք վերաբերում են ինչպես Արարատ-
յան դաշտի, այնպես էլ հին Վաղարշապատի
անցյալ մշակույթի զարգացման տարրեր փուլե-
րին: Այս փոքրիկ հաղորդման համար հիմք են
ծառայել էջմիածնի քաղաքի Լենինի անվան պե-
տական տնտեսության արտադրական մասի տե-
րիտորիայում հայտնաբերված դամբարանադաշ-
տի՝ մասնակի հնապատությունների հետևան-
քով հավաքված նյութերը:

Հայտնի էր, որ էջմիածնի քաղաքից հյու-
սիս-արևելք, Հոլիսիմի և Զվարթնոց տաճարնե-
րի միջև ընկած հողատարածության վրա գլու-
նըում էր պատմական Վաղարշապատի դամ-
բարանադաշտը:

Դամբարանադաշտի ճշգրիտ սահմանները,
ինչպես նախկին ուսումնասիրությունների, այն-
պես էլ մեր հետազոտությունների միջոցով հը-

Գերեզմանի կողերը շարված էին ուղղահա-
յաց դիրքում դրված քարերի մի շարքով, որոնց
վրա դրված էին նրա երեսը ծածկող վեց սալա-
քար: Սալարկղի ներսը լցված էր ավազախտան
հողով, որը ըստ երևույթին թափվել էր քարերի
արանքից: Հողի հեռացումից հետո պարզվեց,
որ դա միայնակ թաղում է, որի շատ վատ պահ-
պանված ոսկորների մնացորդները միջոցով հը-
նարավոր եղավ որոշել ննջեցյալի դիրքը: Նա
պահված էր մեջքի վրա ձգված դիրքով, դուխը
դեպի արևելք: Սալարկղի մեջ նյութական մշա-
կույթի ոչ մի նմուշ չկար: Դամբարանի խորու-
թյունը բլրի մակերեսից մեկ մետր էր, երկա-
րությունը՝ 2,3 մ, լայնությունը դիրի մասում՝
0,5 մ, ոտքերի մասում՝ 0,4 մ:

Երկրորդ գերեզմանը տեղավորված էր ա-
ռաջինից 10 մ դեպի հյուսիս-արևելք: Այն կա-
ռուցված էր հում կավաշաղախից, պատերը ու-
նին աղեղնաձև տեսք: Երեսը ծածկված էր ան-
մշակ սալ քարերով: Հետաքրքիր է նշել, որ դամ-
բարանի երեսը ծածկող քարերից մեկը 75 սմ
երկարություն, 45 սմ լայնություն ունեցող ա-
ղորիք էր, պատրաստված ծակտուկեն մակերես
ունեցող բազալտ քարից: Աշխատանքային մա-
կերեսը լավ հղկված է, իսկ հակառակ կողմը՝
քարի բնական վիճակն է (ԷԳԹ, № 1/251): Այս
գերեզմանն էլ առաջինի նման պարունակում էր

1 Վաղարշապատի դամբարանադաշտի տե-
րիտորիայում հնագիտական ուսումնասիրու-
թյուններ են կատարել պրոֆ. Ա. Քալանթարը
(«Հին Վաղարշապատի պեղումները», Երևան,
1935) և մեծավաստակ ճարտարապետ Թ. Թո-
րամանյանը (սնյովներ հայկական ճարտարա-
պետության, Երևան, 1945):

մեկ թաղում: Ննչեցյալը դրված էր գլխով դեպի արևելք: Բացի ոսկորների մնացորդներից, այլ առարկաներ չգտնվեցին: Գամբարանի երկարությունը հավասար էր 1,3 մ, լայնությունը՝ 0,5 մ: Ըստ հրեալվիին, ննչեցյալը եղել է անշահահատ:

Նույն բլրի վրա հայտնաբերված էր եղել նաև կարասային թաղում. ցավոք, մեր այցելություն ժամանակ կարասը արդեն ոչնչացված էր, հնարավոր կղավ հավաքել մի քանի բեկոր, որոնցով անհնար է վերականգնել կարասի տեսքը: Նշենք, որ կարասը պատրաստված է պղնձախառն կավից և ունի վառ կարմիր գույն: Ուշադրով է, որ այս կարասի միջև շինարարները գտել էին կաթնագույն ապակույց պատրաստված փոքրիկ սրվակ: Այն ունի 6 սմ բարձրություն, հարթ հատակ, ուսուցիկ իրան, բարձր նեղ վիզ: Սրվակի շուրթը կտորված է (էԳՔ, № 1/119, նկ. 1):

Հայտնաբերված դամբարանների մյուս խումբը տեղավորված է արտադրական մասի արհեստանոցների դիմաց, բանջարեղենի պահեստ-ստանարանի տերիտորիայում: Նախապես նշենք, որ այս հատվածում դամբարանները ապակի շատ էին և իրենց թաղման ձևերով սարքերով էին վերջը նշված խմբի առաջին երկու դամբարաններից:

Երրորդ դամբարանը հայտնաբերվել է 1966 թ.: Նրա խորությունը գիտնի մակերևույթից 1 մետր է: Այստեղ թաղումը կատարված էր կավի դափաղի մեջ, որը դրված էր հյուսիս-հարավ ուղղությամբ (նկ. Ց 2): Կավաշին դափաղը ծածկված էր 40x60x5 սմ չափեր ունեցող կլամինդրներով: Գափաղի երկարությունը հավասար էր 1,7 մ, լայնությունը ոտքերի կողմում 15 սմ, իսկ ուսերի՝ 54 սմ, խորությունը՝ 35 սմ: Ննչեցյալի ոտքերի կողմում դափաղի հատակին արված էր անցք, սրբ ըստ երեւոյթին այն տեղաշարժելու համար էր: Հսկի մեջ, խոնավ միջավայրում երկար մնալու հետևանքով այն շատ քայքայված էր, ուստի և պեղելուց հետո հնարավոր չեղավ տեղաշարժել: Հանգուցյալի մնացորդների մաքրման ժամանակ կրճի ոսկորների վրա հայտնաբերվեցին ոսկրե մի կախիկ ու սղնձե ասեղի երկու բեկոր: Ննչեցյալը պատկած էր մեջքի վրա ձգված վիճակում:

1967 թ. հայտնաբերվեց չորրորդ դամբարանը, որը գտնվում էր երրորդից 5 մետր հարավ: Սա կարասային թաղում էր: Նրա հայտնաբերման ժամանակ կարասի արտաքին մասը արդեն ավերվել էր ու անհետ ոչնչացել: Կարասի ներսը լցված էր հողով, որը մաքրելուց հետո սարգվեց, որ գերեզմանը կողոպտված է եղել: Նրա մեջ չհայտնաբերվեցին ո՛չ կմախքի, և ո՛չ էլ այլ մնացորդներ: Ուշագրավ է նաև այն, որ կարասի

գետի գիտնի մակերեսը նայող կողմ ջարդված էր, իսկ բեկորները շահյին:

Կարասը դրված էր կողի վրա, բերանը դեպի հյուսիս-արևելք, կարասի բերանը ծածկված էր կլամինդրով, ինչպիսիք հայտնաբերվել էին երրորդ դամբարանում, այնուհետև կլամինդրը արտաքին կողմից ծածկվել էր հարդախառն կավաշաղախով, իսկ կավաշաղախի վրա ամրացվել էին 40x40x40 սմ չափի հում աղյուսներ: Սրճավուն կարասն ունի օվալաձև բերան, հաստ, դուրս բացվող շուրջ 60 սմ տրամագծով: Իրանը զարդարված է կլամինդր հորիզոնական դասերով, որոնցից երեքը անցնում են ուսերի վրայով, իսկ մեկը՝ կենտրոնով: Գոտիները իրենց հերթին զարդարված են սեղմելու եղանակով արված փոսիկներով, որոնց միջև եղած հեռավորությունը 20 սմ է, կարասի իրանի տրամագիծը՝ 90 սմ:

Քիչ դամբարանը նախապես թաղանվել էր ու մեղ էր հասել կիսավեր վիճակում, այնուամենայնիվ մեղ տվեց մեծարժեք նյութ զամբարանադաշտի կարասային թաղումների ժամանակը որոշելու, ինչպես նաև Հայաստանի II դարի քաղաքական գրություն հետ կապված որոշ հարցերի պարզաբանման համար:

Կարասի բերանը ծածկող կլամինդրը իր վրաներ լատինատառ գրությամբ, որի վերջումն էր կատարեց պատմական դիտությունների քննանձու Ս. Մ. Կրկյաշարյանը: Վերջումն էլ, մեկնաբանություններն ու եզրակացությունները տրվում են ստորև:

1968 թ. դարնանը նույն տերիտորիայում հայտնաբերվեց մեկ այլ կարասային թաղում: Այն Ի տարբերություն չորրորդ դամբարանի, նրա բերանը փակված էր միայն կավաշաղախով. ներսը մասամբ լցված էր հողով, որը թափվել էր կարասի իրանի ճեղքերից:

Ննչեցյալի ոսկորները շատ վատ էին պահպանվել, որի հետևանքով հնարավոր չեղավ որոշել նրա դիրքը: Կարասի միջից հայտնաբերվեց ապակյա զեղեցիկ սրվակ կաթնա-մանուշակազուն երանգներով: Սրվակին ունի գեղեցիկ ձևավորված կանթ, որը միացած է ուսի հետ, իրանի վերին մասով անցնում է բարակ կնդրավոր գոտի (նկ. 1):

Կարասային թաղումների ներսում ոսկորների վատ պահպանվածության հետևանքով հրնարավոր չէ որոշակի որևէ բան ասել նրանց մեջ թաղված ննչեցյալի դիրքի մասին, սակայն ելնելով Գառնիի ու այլ վայրերի անտիկ շրջանի կարասային թաղումներից հայտնի ավայրներից, մեղ թվում է, որ վաղարշապատի դամբարանադաշտի մեկ կարասի մեջ թաղված դիակ-





24. 2



24. 3

4
1
K
1

ները պահած էին եղև կողքի վրա, ոտքերը ծաված վիճակում:

Կարասային թաղումները Հայաստանում իրականացվել են դեռևս մ. թ. ա. VII դարից, դրանցից վաղագույնները հայտնաբերված են Արդիշտիխիլի քաղաքի դամբարանադաշտում²:

Հին Վաղարշապատի դամբարանադաշտից հայտնի են նաև քարարկղային, զույգ կարասային, խնոցիանման դադաղներ և այլ տիպի թաղումներ:

Հնագիտական հետազոտությունների հետևանքով հավաքված նյութերի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում դեռևս մ. թ. ա. III հազարամյակից հայտնի քարարկղային թաղումների սովորված հարատևել է մինչև վաղ միջնադարյան ժամանակաշրջանը: Ուսումնասիրված դամբարաններում հնագիտական նյութերի բացակայության փաստի հիման վրա կարող ենք ասել, որ նրանք վերաբերում են Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն դառնալուց հետո ընկած ժամանակաշրջանին, մասնավորապես մ. թ. IV—V դարերին:

Կարասային թաղումների ժամանակաշրջանի որոշման համար կարևոր նշանակություն ունեն ոչ միայն նրանց միջից գտնված հնագիտական իրերի և Հայաստանի այլ հնավայրերից հայտնի նյութերի համադրությունները³, այլև կոնկրետ դրավոր փաստերը, որոնցից մեկը բերվում է ստորև:

* * *

Հայ գրերի ստեղծումից առաջ Հայաստանում օգտագործել են արամեերենը (Արտաշես I-ի արամեական արձանագրությունները, որոնք պատմահայրը կոչում է «Արտաշիական», Գառնիի արամեերեն արձանագրությունը), հունարենը (Արմավիրի, Գառնիի, Ասպարանի, Տիգրանակերտի արձանագրությունները և հայոց թագավորների հասած դրամների վերտառությունները) և լատիներենը (Խարբերդի, Էջմիածնի, Փոքր Վեդիի արձանագրությունները)⁴:

Այդ լեզուներով մեզ հասած վավերամուշ-

ներին ժանթանալիս աչքի է զարկում մի հանգամանք. հայ թագավորները իրենց թողած արձանագրություններում օգտագործել են բացառապես արամեերենը և հունարենը, մինչդեռ լատիներեն արձանագրությունների հեղինակները օտար նվաճողներն են կոչել, հռոմեացի կայսրերը, լեզուականները: Համանման երևույթ նկատելի է նաև Հայաստանին հարևան մյուս երկրներում, մի բան, որը նշել է դեռևս Կ. Վ. Տրեվերը⁵:

Մինչև այժմ Հայաստանից մեզ հայտնի լատիներեն վավերագրերին Ռ. Քորոսյանի պեղումների շնորհիվ ավելացավ ևս մեկը՝ վերևում հիշատակված դրոշմը կարասային թաղման կավի կափարիչի վրա (նկ. 3): Թեև առաջին երկու տառերը վատ են նկատվում, այնուամենայնիվ մեզ հաջողվեց վերծանել դրոշմը: Այնտեղ երբևէ չէր լատիներեն արձանագրությունների համար: [II] նշանը համար է լատիներեն IV թվանշանին, իսկ SC կապակցությունը SCYTHICO սկյութական բառի առաջին տառերն է պատկերում: Ուստի և կրճատումները լրացնելու դեպքում կկարգանք՝ LEGIO [II] SCYTHICO զեդոն շորտուղ սկյութական:

Դրոշմի վրա պատկերված այս ամբողջ կապակցությունը նույնությամբ առկա է նաև 1967 թ. Փոքր Վեդիում հայտնաբերված լատիներեն նոր արձանագրության մեջ, որը թողել է Տրաչանոս կայսրը⁶:

Հայաստանում հայտնաբերված լատիներեն և հունարեն արձանագրություններում հիշատակվում են հռոմեական երեք լեզուների անունը, որոնք ժամանակավորապես վավթել էին Հայաստանի այս կամ այն քաղաքը և տեղադրվել այնտեղ որպես կայսրերու Դրանք են՝ 4-րդ Սկյութականը, 12-րդ Ֆուլմիանտան (կայծակնային) և 15-րդ

ված այդպիսի նոր արձանագրությունները հրատարակվել են հետևյալ հոդվածներում՝ Գ. Ա. Тирация, Новонайденная надпись Арташеса I, ЗУՍ2 ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 10; Ա. Գ. Периханян, Арамейская надпись из Гарни, «Պատմա-բանասիրական հանդես» 1964, № 3; նույնի՝ Арамейская надпись из Загезура, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, էջ 104—128; Բ. Ն. Առաքելյան, Լատիներեն արձանագրություն Արտաշատից, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4 և այլն:

⁵ К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 100:

⁶ Բ. Ն. Առաքելյան, նշվ. աշխ.:

² Հ. Ա. Մարտիրոսյանի պեղումների շճրապարակված նյութերից:

³ Б. Н. Аракелян, Гарни II, 1957, աղ. XIII, Ժ. Գ. հ ա շ ա տ ր յ ա ն, Հայաստանում գտնված անտիկ ապակու մի քանի նմուշներ, ЗУՍ2 ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1967, № 12, էջ 79—88:

⁴ Հայաստանում գտնված տարբեր լեզուներով արձանագրությունները ամփոփված են՝ К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953 աշխատության մեջ, 1953 թ. հետո մեզ մոտ հայտնաբեր-

Ապոլլինարիսը (հուն. Ἀπολλωνιος — Ապոլլոն-նիրոս):

Դիոն Կասսիոսի «Հռոմեական պատմութեան» մեջ կա հռոմեական բոլոր լեզուներէրի ցուցակը, որանց համարները, անվանումը և հիմնական բանականողիքն: Այնտեղ նշված է: Թե 4-րդ լեզուները (Սկյութական) տեղակայված էր Ասորիքում, 12-րդը (Ֆուլմինատա) և 15-րդը (Ապոլլոնիոս)՝ Կապպադովկիայում⁷:

Այսպիսով ստացվում է, որ Հայաստանի արևմտյան և հարավ-արևմտյան ամբողջ սահմանի երկայնքով, արդեն հռոմեական պրովինցիա դարձած Ասորիքում և Կապպադովկիայում տեղադրված էին հռոմեական վերոհիշյալ երեք լեզուները: Անկասկած, այս լեզուներն էին, որ ամեն անգամ առաջին հերթին մասնակցում էին Հայաստանի դեմ Հռոմի ձեռնարկած յուրաքանչյուր արշավանքին:

Փոքր Վեդիի լատիներեն արձանագրութունը թողել է Տրայանոս կայսրը, որը նվաճել է Հայաստանը 114 թ.Ց: Ուստի և դրանում հիշատակված 4-րդ Սկյութական լեզուները, կամ նրա մի մասը 114—115 թթ. կանգնած է եղել Հայաստանի հին մայրաքաղաք Արտաշատի մոտ: Քանի որ մեր դրոշմը ևս պատկանում է 4-րդ Սկյութական լեզուներին, ապա բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ նույն լեզուներ մի այլ զորամաս նույն թվականին կանգնած է եղել Վաղարշա-

պատի մոտ, մանավանդ, որ Դիոն Կասսիոսը ևս վկայում է, որ Հայաստանը նվաճելուց հետո Տրայանոսը, երկրի կարևոր կետերում կայազոր թողնելով, վերադարձավ Եդեսիա⁸:

Հայաստանում այդ թվականին 4-րդ Սկյութական լեզուների ներկայութեան փաստը մեզ հնարավորութուն է տալիս լրացնելու Հայաստանի դեմ Տրայանոսի կատարած արշավանքի ուղղութունը: Սկզբնաղբյուրները հիշատակում են այդ արշավանքի մի ուղղութունը միայն՝ Փոքր Ասիայի վրայով Մեկիտենե—Սատալա—Արտաշատ¹⁰: Համարելով, որ սա հռոմեական զորքերի դեպի Արտաշատ շարժման հիմնական ուղղութունն էր, պիտի ենթադրել, որ Տրայանոսի զորքերի մի երկրորդ թև՝ 4-րդ Սկյութական լեզուները, որի զորակայանը Ասորիքն էր, միաժամանակ շարժվում էր հարավից, աքցանի մեջ սանկու համար հայտը երկիրը:

Ռ. ԹՈՐՈՍՅԱՆ, Ս. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

⁹ Dio Cass., LXVIII, 21,1:

¹⁰ Dio Cass., LXVIII, 19, 2: Th. Mommsen, Römische Geschichte, V, Berlin, 1886, էջ 399: A. Gutschmid, Geschichte Irans und seiner Nachbarländer von Alexander dem Grossen bis zum Untergang der Arsaciden, Tübingen, 1888, էջ 141, է. է. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մաս Ա, Երևան, 1957, էջ 23—26:

⁷ Dio Cass., LV, 23, 3—5.

⁸ Ռ. Ն. Առաքելյան, նշվ. աշխ.:

պա
կա
նա
կա
կա
կե
չը
10*